

# Ամենաերկար նախաձանցը

Ժամանակի սահմանափակում՝ 2 վայրկյան  
Հիշողության սահմանափակում՝ 256 MB  
Կշիռը՝ 100 միավոր

## Ճարտարանք

Գևորգն ունի  $s$  տողը, որն իրենից ներկայացնում է անգլերեն փոքրատառերից կազմված հաջորդականություն: Նա որոշել է ստանալ նոր տող իր ունեցած տողից հետևյալ կերպ. նա վերցնում է սկզբնական տողի որևէ տառեր և, հարաբերական հերթականությունը չփոխելով, գրում է իրար կողք: Այլ կերպ ասած՝ եթե սկզբնական տողի տառերը նշանակենք  $s_i$ -երով՝  $s = s_1s_2\dots s_n$ , ապա Գևորգն ընտրում է որևէ  $k$  թիվ,  $1 \leq i_1 < i_2 < \dots < i_k \leq n$  ինդեքսներ և ստանում նոր տող՝  $s_{i_1}s_{i_2}\dots s_{i_k}$ : Այդպես, օրինակ,  $abbc$  տողից կարելի է ստանալ հետևյալ տողերը՝  $a, b, c, ab, ac, bb, bc, abb, abc, bbc$  և  $abbc$ : Նրա նպատակն է ստանալ այնպիսի նոր տող, որը հանդիսանա սկզբնական տողի նախաձանց: Բայց կա մի պայման. չպետք է վերցված բոլոր տառերը  $s$ -ի  $k$  երկարության նախաձանցից լինեն, այսինքն՝ չպետք է տեղի ունենա հետևյալ պայմանը՝  $(i_1, i_2, \dots, i_k) = (1, 2, \dots, k)$ :

Օգնեք Գևորգին գտնել այդպիսի ամենաերկար հնարավոր նոր տողը: Հարկավոր է արտածել  $k$  թիվը և  $i_1, i_2, \dots, i_k$  ինդեքսները: Եթե ոչ մի նոր տող չի հանդիսանում սկզբնականի նախաձանց, ապա բավական է ընդամենը արտածել 0 թիվը:

Հիշեցում՝ տողի նախաձանցը տող է, որը ստացվում է սկզբնական տողից՝ աջից ջնջելով որոշ քանակի (հնարավոր է 0 հատ) սիմվոլներ: Օրինակ՝  $abac$ -ի նախաձանցներն են  $a$ -ն,  $ab$ -ն,  $aba$ -ն, և  $abac$ -ն:

## Մուտքային տվյալներ

Մուտքի միակ տողում տրված է  $s$  տողը ( $1 \leq s.length \leq 2 \cdot 10^5$ ):

## Ելքային տվյալներ

Ելքում պետք է արտածել  $k$  թիվը և ինդեքսների  $i_1, i_2, \dots, i_k$  հաջորդականությունը՝ անջատված մեկական բացատանիշերով:

## Օրինակ

Մուտք	Ելք
abb	2 1 3
acbd	0
ararka	3 3 4 6

## Բացատրություն

Վերջին օրինակում կարելի է նաև արտածել  $(1, 2, 6)$  և  $(1, 4, 6)$  եռյակները:

## Ենթախնդիրներ

- Ենթախնդիր 0 (**0 միավոր**) Օրինակները,
- Ենթախնդիր 1 (**25 միավոր**)  $s.length \leq 20$ ,
- Ենթախնդիր 2 (**50 միավոր**)  $s.length \leq 1000$ ,

- Ենթախնդիր 3 (**25 միավոր**)  $s.length \leq 2 \cdot 10^5$  :